**Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Գառնիի Արթուր Հակոբյանի անվան N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (ֆիզկուլտուրա 18 դասաժամ, ֆրանսերեն 11 դասաժամ,կերպարվեստ 19 դասաժամ, մաթեմատիկա 20 դասաժամ, պատմություն 14 դասաժամ, բնություն 6 դասաժամ, ԹԳՀԳ 3 դասաժամ, երաժշտություն 3 դասաժամ ) ուսուցչի թափուր տեղի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ) և միջին մասնագիտական կրթությունը հաստատող փաստաթուղթ, բայց կամավոր ատեստավորումն անցած
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 04-ից մինչև սեպտեմբերի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025 թ. սեպտեմբերի 24-ին՝ ժամը 15:00-ին**, Գառնիի Արթուր Հակոբյանի անվան N 1 հիմնական դպրոցում, հասցե՝ Գառնի Խ. Աբովյան 1:

Տեղեկությունների համար զանգահարել (0222) 6-38-18, (091) 53-56-40 հեռախոսահամարներով: